ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅԱԶԳԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆԸ

Մայիսի 8-ին, Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակի 62-րդ տարեդարձի առիթով, Մոսկվայի Հայորդյաց Տունն իր հյուրընկալ հարկի տակ էր հավաքել Մոսկվայում և Մոսկվայի շրջանում ապրող Հայրենական Մեծ պատերազմի մասնակից երեսունից ավելի վետերանների: Եկեղեցու նախաձեռնությամբ առաջին այս հանդիպումը մեծ ոգևորությամբ ընդունվեց վետերաների կողմից, որոնց համար ուրախալի նորություն էր՝ իրենց աչքերով տեսնել կրթական կենտրոնը և նրա սաներին:

Երեկոյան ժամը 18.00-ին սկսվեց երեկույթի գեղարվեստական մասը, որ Հայորդյաց Տան սաների և Մոսկվայի Հայ Եկեղեցու «ՆՈՒՌ» երիտասարդական միության ջանքերով կազմակերպել էր դպրոցի պաշտոնեությունը: Հանդիսությանն իրենց մասնակցությունը բերեցին Ռուսահայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևորականաց դասը, հրավիրյալ պատվավոր հայորդիներ և բազում ներկաներ:

Հանդիսության սկզբում վետերաններին բարիգալստյան խոսք ասաց Տ. Գրիգոր քին. Գրիգորյանը, որից հետո երաժշտական դաշնամուրային գեղեցիկ կատարումներով հանդես եկան Հրանտ և Միքայել Հարությունյանները: Ներկաներին մեծ բավականություն պատճառեց նաև դպրոցի սաների պատրաստած գեղարվեստական հայտագիրը, որի ընթացքում հնչեցին հայրենասիրական երգեր, ասմունք, ինչպես նաև ազգային պարեր:

Հավարտ երեկոյի ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Եզրաս Սրբազանը՝ մասնավորապես ասելով. «Այն մեծ հաղթանակը, որ նվաճեցին մեր քաջ ծնողները Հայրենական Մեծ պատերազմում, ապահովեց մեր ներկան, այսրվա մեր գոյությունը: Մեր նահատակների հեղած արյամբ գծագրված ազգային մեր ճանապարհը ուխտի ճանապարհ է, որ պետք է յուրաքանչյուր հայորդու վառ պահի «Վասն հավատոյ և վասն հայրենյաց» Վարդանանց մեծ պատգամով:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ